



ԿՈՄԻՏԱՍ

ՀԱՅՐԻԿ, ՀԱՅՐԻԿ

A black and white portrait of a man with a full beard and a shaved head, wearing a dark clerical garment. He is looking slightly to the right. A large, ornate cross hangs from a chain around his neck. The background is a light, mottled grey.

ԿՈՄԻՏԱՍ

ՀԱՅՐԻԿ, ՀԱՅՐԻԿ



Սպիրիդոն Մելիքյանը,
Կոմիտասն ու Արմենակ Շահնուրադյանը, 1909թ.

ԴԱՆԻԵԼ ԵՐԱԺԻՇՏ



ՀԱՅՐԻԿ, ՀԱՅՐԻԿ

ԵՐԳԸ ԵՎ ԿՈՄԻՏԱՍԻ ԲԱՑԱՌԻԿ
ՆՎԱԳԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

1912թ. Փարիզում, Կոմիտասը և Արմենակ Շահմուրադյանը ձայնագրեցին երգեր: Ձայնագրող սարքը՝ Ֆոնոգրաֆը նոր էր տարածվում Եվրոպայում:

Այն ստեղծել էր ամերիկացի Թոմաս Էդիսոնը (1877թ.): Ֆոնոգրաֆը դեռ շատ հեռու էր կատարելությունից՝ ձայնագրությունը շուտ էր մաշվում, հնչողությունը աղմկոտ էր, պղտոր և այլն: Մինչ Կոմիտասը, արդեն ձայնագրվել էին Էդվարդ Գրիգը (1943-1907), Պաբլո Սարասատեն (1844-1908), Աննա Եսիպովան (1851-1914) և այլ մեծեր:

Կոմիտասի և Շահմուրադյանի հիշյալ ձայնագրությունների մի մասը հետագայում վերաթողարկել է Մոսկվայի «Մեղոդիա» ֆիրման: Սկավառակի վերնագիրն էր. «Երգում է Արմենակ Շահմուրադյանը: Կոմիտասի երգերը»: Դրանք էին՝ «Հայաստան», «Կանչե կոունկ», «Գարուն ա», «Կռունկ», «Քրիստոս պատարագյալ», «Հայրիկ, Հայրիկ» և այլն: Ընդ-

հանուր թվով 13 երգ: Իսկ 1994թ. Գերմանիայում, «Octa records» և «Anima-Vox» ֆիրմաները թողարկել էին լազերային սկավառակ, որում զետեղված էին փարիզյան ձայնագրություններից՝ 6 երգ Կոմիտասի մեներգությամբ («Կալի երգ»-ը, իր աշակերտ՝ Վահան Տեր-Առաքելյանի ձայնակցությամբ), և 9 երգ՝ Ա. Շահմուրադյանի կատարմամբ: Ընդ որում, բնօրինակում Շահմուրադյանի մի շարք երգերում դաշնամուրային նվագակցությունը կատարել էր Կոմիտասը, իսկ մյուս երգերն ուղեկցվել էին նվագախմբի տարբեր կազմերով:

Նշված նոր սկավառակներում հին ձայնագրությունների որակը էապես չի լավացել: Օրինակ, «Գնա, գնա» երգի նախավերջին տակտում «Սարին, օ, յար ջան» կրկնվող բառերի «յար ջան» բառը և «ջան»-ի «ջ» տառը ջնջվել են ձայնագրությունից: Բացի այդ, «Գարուն ա» երգի նվագակցությունը սկսվում է 3-րդ տակտի 3-րդ ութերորդականից: Այլ թերություններ ևս շատ են:

Ձայնագրության որակի մասին խոսեցինք, քանի որ «Հայրիկ, Հայրիկ» երգի նշված տարբերակի նոտագրությունը մեզ հայտնի չէ: Այս տարբերակը կրկին կատարելու և ձայնագրելու համար անհրաժեշտ էր նոտագրել այդ արխիվային, անկատար ձայնագրությունից: Մեր հոգվածին կից ներկայացնում ենք վերծանման առաջին փորձը, որը իրականացրել է ջութակահարուհի Գոհար Դանիելյանը: Սակայն ակնկալում ենք նաև նոտագրության այլ տարբերակներ, քանի որ տվյալ կատարումը

շատ ազատ է, անհատական, ինչը չի բացառում գրառման այլ եղանակներ: Այս երգը, որ փրկվել է, վերապրել Հայոց ցեղասպանությունը, արժանի է մեծ ուշադրության և խորն ուսումնասիրության:

«Հայրիկ, Հայրիկ» երգը տարբերվում է բոլոր երգերից նախ և առաջ իր յուրօրինակ, իմպրովիզացիոն նվագակցությամբ:

Նախքան երգի և նվագակցության խնդիրներն արծարծելը, հակիրճ անդրադառնանք ստեղծման շարժառիթին և երգի բովանդակությանը:

Բանաստեղծական տեքստի հեղինակն է Հայրապետ Ջանիկյանը: Այն երգվել է Գարեգին Սրվանձտյանի «Թե Հայրենյաց պսակադիր» երգի մեղեդիով: Ըստ Ռոբերտ Աթայանի, 19-րդ դարավերջին, այդ նույն մեղեդիով և իր տարբերակներով երգվել է վեց երգ: Դրանցից «Երկու տարբերակները նվիրված են Մկրտիչ Խրիմյանին» (Կոմիտաս, Երկերի ժողովածու, Երևան, «Հայաստան» հրատ., հ. 4, էջ 175): Ընդ որում, Շահմուրադյանի երգած մեղեդին տարբերվում է Կոմիտասի համանուն խմբերգի մեղեդիից:

Հ. Ջանիկյանի հիշյալ բանաստեղծությունը կառուցված է երկխոսության ձևով:

«Վասպուրական աշխարհի» ժողովրդի անունից պոետը կարեկցանքի, մխիթարանքի և քաջալերանքի խոսք է հղում Խրիմյան Հայրիկին, ով համիդյան լծի տակ հեծող ժողովրդի և իր խաչն է կրում՝

վիշտ, որը խորացել է Բեռլինի վեհաժողովում (1878թ.)՝ հայկական հարցի տապալմամբ, ինչպես նաև Հայրիկի աքսորով: (Բեռլին մեկնելուց առաջ, Հայրիկին հարցրել էին, թե ինչպես է նա ներկայացնելու հայության օրհասական վիճակը, եթե նա եվրոպական լեզուներին չի տիրապետում: Հայրիկը պատասխանել էր, թե ինքը խոսելու է բոլորին հայտնի լեզվով՝ կբարձրանա բեմ և հոնգուր-հոնգուր կլացի: Սակայն հայկական պատվիրակությանը նույնիսկ չթողեցին դահլիճ մտնել: Այս դեպքից հետո էր նա դիմել հայությանը. «...Սիրելի ժողովուրդ Հայոց, ես կրնայի՞ խարխսայի կաթսային մէջ խոթել իմ ԹՈՒՂԹԷ ՇԵՐԵՓԸ, որ պիտի թրջուէր և հոն մնար: Հոն, ուր գէնքն է խոսող, ուր սուրերը կը շողշողան, հոն ինչ գործ ունին խնդիրք և աղերսաթողթեր» (Խրիմեան Հայրիկ, կազմող՝ Արմինէ Քէօշկերեան, Մոնրէալ, 1994, էջ 63): Ինքը՝ Հայրիկը, իր մասին ասել է.

«Ես՝ Հայաստանի ցավոտ պատկերն եմ» (անդ, էջ 9): Եվ Բեռլինի վեհաժողովում՝ Հայրիկի չինչած հոնգուր-հոնգուր լացը հնչում է «Հայրիկ, Հայրիկ» երգում, հատկապես, Արմենակ Շահմուրադյանի արտաբերվող «քեզ փուշ բերավ» բառերում: Տեղին է հիշել Սայաթ-Նովայի հետևյալ խոսքը.

Ուստի՛ կուգաս, դարիբ բլբուլ,
Դու մի՛ լաց լի, յի՛ս իմ լալու...

Ահավասիկ, Շահմուրադյանի երգած երգի երկու տները:

Հայրիկ, Հայրիկ, քո հայրենիք
Վասպուրական մեր աշխարհ,
Վարդի փոխան քեզ փուշ բերավ,
Ցավերդ դառան բիր հազար ...
Հայրիկի պատասխանը.
Հայրիկն ասաց. «Իմ հայրենեաց
Փուշն անուշ է, քան զվարդ,
Ես այն փշոց մեջը դարձեալ
Կը որոնեմ սիրուն վարդ ...

Եվ եթե այդ փշերը պսակ են դառնում և արյունոտում
Հայրիկի ճակատը, ինչպես Հիսուսի փշեպսակումի
Ժամանակ, ապա արյան կաթիլները վերափոխվում
են հույսի և փառքի պսակի: Սա համահունչ է սր-
բերին վերաբերող հայտնի գաղափարին. «Եթե խա-
չակից ես, ուրեմն և փառակից ես»:

Հայրիկ, Հայրիկ, քո սուրբ ճակատ
Արին արցունք են, ո՛հ, միշտ,
Փթթեալ վարդից կարմիր թերթեր,
Կը պըսակեն փառօք զարդ ...

Երգի ամբողջական տեքստը բաղկացած է վեց
տնից, սակայն, ինչպես նշվեց, Շահմուրադյանը եր-
գում է երկու տուն՝ Հայրիկին պատճառած ցավերի
մասին տունը դաշնամուրը սկսում է թախծոտ մի-
նոր հարմոնիայով, իսկ Հայրիկի հուսադրող պա-
տասխանը (երրորդ տունը)՝ լուսավոր մաժորով:

Ժամանակին, երբ Ալան Հովհաննեսը Երևանում էր,
դիտելով լեռները, ասել էր. «Մեղեդիներ են, հզոր

մեղեդիներ» (Ցիցիլիա Բրուտյան, Սփյուռքի հայ երաժիշտները, «Հայաստան» հրատ., Երևան, 1968, էջ 366):

Այդպիսի հզոր, «մասիսաձև» մեղեդի է, նաև «Հայրիկ, Հայրիկ» երգի մեղեդին:

Կերպարանաստեղծության մեջ մեծ է նաև նվագակցության դերը:

Եթե մեղեդիի ելևէջները նմանվում են լեռներին, ապա նվագակցության ճախրող հնչյունները հիշեցնում են ամպերը: Նվագակցությունն, ասես, երգի բեկբեկուն արձագանքն է երկնքում, քանի որ այն ծավալվում է վերին՝ երկնամերձ ռեգիստրներում:

Ռիխարդ Շտրաուսի «Կապրիչչո» երաժշտական թատերախաղում պոետը և կոմպոզիտորը վիճում են, թե ու՛մ արվեստն է ավելի ազդեցիկ: Կոմպոզիտորը ոգևորված բացականչում է, «Գեթ մեկ ակորդ, և մի ամբողջ աշխարհ է բացվում քո առջև» (Эрнст Краузе, Рихард Штраус, Гос. муз. издат., Москва, 1961, стр. 163):

Այդպիսին են «Բեթհովենի անմահական ակորդները» (Գարեգին Նժդեհ): Այդպիսին են և Կոմիտասի անմահական ակորդները, հարմոնիաները: Օրինակ, Պատարագում՝ «Սուրբ, սուրբ»-ի վերջին ակորդները, կամ «Կանչե, կոռնկ» երգի կվարտկվինտակորդները: Այդպիսին են «Հայրիկ, Հայրիկ» երգի՝ արպեջջոյով սփռվող, մեղեդիացվող ակորդները, կամ փոխկանչերից գոյացող

ակորդների «վրձնահարվածները», որոնք գունավորում են երգի մեղեդին և բացում Երկնքի դռները:

Եվ ինչպես միշտ, այս երգում ևս, Կոմիտասը դրսևավորում է հայտնի դասական սկզբունքը, այն է. «նվազագույն միջոցներով հասնել առավելագույն արտահայտչականության»:

Այդպես է Կոմիտասը կիրառում նաև կոնտրաստային և իմիտացիոն պոլիֆոնիայի հնարքները, իմպրեսիոնիստական և պուանտիլիստական երաժշտությանը բնորոշ տարրերը:

Հատկապես տների վերջում՝ երգի մեղեդիի «երկնականարում» ծիածանվող դաշնամուրի ծաղկավետ, խնկաբույր մեղեդիի հյուսվածքում: Ակամա հիշում ես Վահան Թեքեյանի «Եկեղեցին հայկական» քերթվածը՝ «Իր սեղանեն մխացող քուլ-քուլա խունկերով... Ուր շուշաններ կծաղկին Շարականի գետին մոտ...»:

Նվագակցությունում Կոմիտասը չի օգտագործել բասերի ռեգիստրը: Այն ծավալվում է ավելի բարձր ռեգիստրում, քան երգը:

Դաշնամուրի հնչյունների շարժման վեկտորը, հիմնականում, ներքևից դեպի վեր է, և հասնում է մինչև 3-րդ օկտավայի «մի»-ն: Հնչյունազանգվածի այսպիսի թեթևացում, պարզեցում, հատկապես տեղի է ունենում Կոմիտասի ժամանակակից՝ Ալեքսանդր Սկրյաբինի արվեստում, մասնավորապես, դաշնամուրային 5-րդ սոնատում: Երաժշտագետ Լեոնիդ

Գակկելը, գրում է. «Սկրյաբինի բասը դադարում է լինել որպես հարմոնիկ, ռիթմիկ հենարան՝ իբրև բաս, հաճախ հանդես է գալիս հարմոնիկ ֆիգուրացիան» (Л. Гаккель, Фортепианная музыка XX века, изд. «Советский композитор», Ленинград, 1976, стр. 66): Այնուհետև մեջբերելով Սկրյաբինի խոսքերը, երաժշտագետը շարունակում է. «5-րդ սոնատը մարմնավորում է ոգու շարժումը անազատությունից դեպի ազատություն, նյութականից դեպի աննյութականը, այսինքն, ապանյութականացման (դեմատերիալիզացիայի) շարժումը» (անդ, էջ 67): Կոմպոզիտորի այս գաղափարը համարելով վերացական, իսկ դրա զգացական մարմնավորումը՝ երաժշտական հրաշք, այնուամենայնիվ, որոշ վերապահում է անում, ասելով հետևյալը. «Եվ հասկացությունը և բառը պատկանում են Սկրյաբինին: Մեզ հայտնի է, այդ հասկացության տեոսոֆիական ծագումը՝ մենք հրաժարվում ենք այն ընդունել գիտական տեսակետից, սակայն Սկրյաբինի արվեստի ուշ շրջանի համար այդ հասկացությունը, գեղագիտորեն մեկնաբանելու պարագայում, դառնում է ամենակարևորը: Մենք դա անտեսելու իրավունքը չունենք» (անդ):

Թվում է, թե մատերիալիզմի էպիկենտրոնում (ԽՍՀՄ) ապրող և գործող երաժշտագետը ինչ-որ չափով տուրք է տալիս իշխող գաղափարախոսությանը՝ Սկրյաբինի «դեմատերիալիզացիայի շարժումը» եզրույթը համարելով ոչ գիտական», քանի որ իր կարծիքով, այն ծագել է տեոսոֆիայից, իդեալիստական ուսմունքից: Սակայն նույն եզրույթը,

«գեղագիտորեն մեկնաբանված», նա չի մերժում: Բայց չէ՞ որ «գեղագիտությունն» էլ գիտություն է: Բացի այդ, ըստ Գյոթեի, արվեստը՝ երկրորդ իրականությունն է, և հաճախ ավելի իրական, քան առաջինը, նյութաշխարհի բազում իրողություններ: Այս գաղափարի լավագույն դրսևորումներից է անտիկ բանաստեղծ Սիմոնիդեսի «Նիոբեի արձանը» դիստիքոսը, որը մենք թարգմանել ենք Մաքսիմ Միխայլովի (1829-1865 թթ.) ռուսերեն օրինակից:

Ինձ քար դարձրին աստվածները ամենակալ ու
վրեժխնդիր.

Մեռած քարը Պրաքսիտելը կյանքի կոչեց
վերստին:

Դառնալով Սկրյաբինին, նշենք, որ նա, անշուշտ, կրել է տեոսոֆիայի ջատագով Ելենա Բլավատսկայայի ազդեցությունը: Սակայն կոմպոզիտորի գաղափարների արմատները այլևայլ ուղիներով խորանում են, հասնում մինչև միջնադարյան արվեստի, սպիրիտուալիզմի ընդերքը: Ահավասիկ, արվեստաբան Երեմիա Իոֆֆեն գրում է. «Աշխարհի այդ սպիրիտուալիստական (ոգեպաշտական – Դ. Ե.) ըմբռնումը կանխորոշել է երաժշտության բնույթը, նրա պոլիֆոնիկ լեզուն: Հնչյունները ոչ թե լոկ զգայական՝ հարմոնիկ երևույթ են, այլև սպիրիտուալիստական: Երաժշտությունն ունի առավել հոգևոր, և առավել նյութական հնչյուններ, ունի երկնային և երկրային ոլորտներ» (И. И. Иоффе, Мистерия и опера, Ленинград, 1937, стр.39-40):

Անդրադառնալով երկնասլաց գոթական տաճարին, Հիսուսի տառապանքներն արտահայտող միստերիաներին, Իոֆֆեն շարունակում է. «Տարածությունն այստեղ... ոչ թե չեզոք միջավայր է՝ այն իր վերևի և ներքևի հարկաբաժիններով հաղորդում է մարմիններին և շարժումներին վսեմի և նսեմի իմաստ... Դրախտ-երկինքը, քավարան-երկիրը, դժոխք-ստորգետնյա աշխարհը՝ սպիրիտուալիստական աշխարհայացքում սրանք տիեզերքի իրական կառուցվածքն են» (անդ, էջ 35): Այսպիսով, երաժշտության հնչյուններն էլ ունեն իրենց իմաստը, կարելի է ասել նաև իրենց «ագրեգատային» վիճակը՝ ինչպես ջուրը՝ սառույց-հեղուկ և երկնասլաց գոլորշի: Ահա այս դիրքերից էլ մենք դիտում ենք, գնահատում Սկրյաբինի, Կոմիտասի և այլ մեծերի ոգեղեն երաժշտությունը:

Միայն հիշյալ «Հայրիկ, Հայրիկ» երգի նվագակցությունը չէ, որ ծավալվում է երգի ձայնահատվածից բարձր ոլորտում:

Անշուշտ, ավելի շատ են այն երգերը, որտեղ Կոմիտասը առատորեն և խորին իմաստով կիրառել է բասերը՝ օրինակ, «Անտունի», «Հով արեք», «Կոունկ» և այլն: Սակայն այն երգերում, որտեղ, պատկերավոր ասած, ավելի շատ զգացվում է երկնքի ձգողականությունը, քան Երկրի, նվագակցությունը, շարադրված է ավելի բարձր ռեգիստրում, քան երգը: Այդ երգերում դաշնակահարի աջ և ձախ ձեռքերի նվագաբաժինները գրված են նույն «սուլի բանալիում»: Այդպիսի «երկնամերձ» նվա-

գակցություն հանդիպում ենք «Երկինքն ամպել է», «Քելեր, ցոլեր», «Իսկի ծառ», «Հոյ Նազան» և այլն:

Կոմիտասի երկերի խմբագիր Ռոբերտ Աթայանը «Իսկի ծառ» երգի ծանոթագրությունում մեջբերում է ձեռագրերից մեկի վրա գրված՝ Կոմիտասի նշումը և ամփոփում. «Այդ ձեռագրում կա Կոմիտասի նշումը՝ «Ութնյակ բարձր փորձել Բ տունը. Նույնը՝ 2-րդ տողը»... Վերջնական վարիանտում նվագակցությունը հաջորդական կարգով մեկ տողի համար ցածր, մեկ տողի համար բարձր է կատարվում» (Կոմիտաս, Երկերի ժողովածու, Երևան, 1969, «Հայաստան» հրատ., հ. 1, էջ 173): Այսպիսով, «Իսկի ծառ» երգում, ինչպես նշվեց՝ նաև մյուս երգերում, նվագակցությունը և երգը տեղերով փոխված են: Սա աննախադեպ երևույթ է, ինչը բխում է երգերի բովանդակությունից, կերպարներից՝ սեր, կարոտ, երկինք, արև, ամպեր, անձրև, թռչուններ և բնության այլ երևույթներ, որոնք յուրահատուկ արձագանք են գտնում Կոմիտասի սրտում:

Եվ այդ յուրահատկությունը պայմանավորված է կոմպոզիտորի յուրօրինակ լսողությամբ, աշխարհընկալմամբ, երաժշտական «տեսիլքներով» և այլն: Օրինակ, «Երկինքն ամպել է» երգում դաշնամուրի ֆիգուրացիաները ուրվագծում են ամպերի կոնֆիգուրացիան, որոնք ճախրում են երգի «երկնակամարում», նաև նմանակում անձրևի կաթիլներին («ինչ անուշ թոն է»): Իսկ խնկաբույր «խնկի ծառը» խորհրդանշում է Երկրի (հողի) և Երկնքի կապը: ԾԱՌ, որի «արմատները մեր սրտում են, իսկ

սաղարթը՝ Երկնքում» (Ռիլկե):

Դառնալով «Հայրիկ, Հայրիկ» երգի իմպրովիզացիոն, ինքնաբուխ բնույթի նվագակցությանը, կարող ենք ասել, որ այն ոչ թե երգի պատվանդանն է, այլ թագն ու պսակը՝ սրբության նշանակ լուսապսակը:

Ինչպես հենց երգում է ասվում.

**Փթթեալ վարդից կարմիր թերթեր,
Կը պսակեն փառօք զարդ:**



Հայրիկ, Հայրիկ, ի՞նչ հայրենի է՝
Վասպուրական մեր աշխարհ,
Վարդի փոխան ի՞նչ փուշ բերավ,
Ցավերդ դառանք բյուր, հաշար:

Մային եկավ սոխակներով,
Վարդի մի թուփ որոնեց,
Փոխան թիփ մալառ գրավ,
Լալահառաւ ճայն հանեց:

Հայրիկն առաջ. “Ի՞նչ հայրենայ
Փուշն առնու է, ի՞նչ լավրդ,
Ես այն փշոց մեջը դարձյալ
Կը որոնեմ սիրուն վարդ:



առաւ փշերն ա՛մեն
առնջ կապեցե՛ք շարի շար,
?ակրիս պահ հյուսեմ,
Ճակարս է հոժար”:

առաւ ճակարին
է, ո՛հ, արդ,
մեր թերթեր
է՛ք զարդ:

Հայրի՛կ, Հայրի՛կ

Հայրի՛կ, Հայրի՛կ, փո հայրենիք՝
Վասպուրական մեր աշխարհ,
Վարդի փոխան փեշ փուշ բերալ,
Վալներդ դառան բյուր, հաշար:

Մայիսն եկալ սոխակներով,
Վարդի մի թուփ որոնեց,
Վոխան թփի մաշառ զքալ,
Հալածառաչ չայն հանեց:

Հայրիկն առաջ. իմ հայրենյալ
Վուշն անուշ է, փան ըզվարդ,
Ես այն փշոց մեզր դարձյալ
Կը որոնեմ սիրուն վարդ:

Այն սայրասուր փշերն ամեն
Վունեզ կապեցեմ շար ի շար,
Թողեմ Ծակրիս պսակ հյուսեմ,
Որին Ծակարս է հոծար.:

Հայրի՛կ, Հայրի՛կ, փո սուրբ Ծակրին
Արյուն-արցունեմ է, ո՛հ, արդ,
Վրբյալ վարդից կարմիր թերթեր
Կպսակին փառո՞ք վարդ:

ՀԱՅՐԻԿ, ՀԱՅՐԻԿ

Խոսք՝ Հ. Ջանիկյանի

Ա. Շահմուրադյանի և Կոմիտասի
ձայնագրությունից Խոտազրեց՝
Գոհար Դանիկյանը*

Rubato **mp**

Voice

Pno.

mp **mp**

Հայ - րիկ, Հայ -

4

րիկ, քո Հայ - րե - նիք _____ Կա - պո - րա -

8

կան մեր - աշ - խարի _____ վար -

* Զանի որ երբ Խոտազրեց է համապատասխան վերադարձվել ձայնագրությունից (ընդհանուր 1912թ.), չեն բացառվում որոշ տարբերություններ:

12

դի փո - խան - բեզ փուշ բն - թաղ

16

rit. *accel.*

ցա - վերդ դա ծան րյուր հա - զար: Կար: դի փո - խան

rit. *accel*

20

rit

բեզ փուշ բն - թաղ

rit

23 *accel*

գա - վերդ դա - ռան թյուր հա - զար:

26

— Հայ - րիկն ա - սաց Իմ հայ - րեն - յաց

30

փուշն ա - նուշ է, քան թզ -

34

փարդ, ես այն փը - շոց մն -

37

- ջրն դար - ձյալ կը - ո - րո - նեմ

rit.

rit.

40

a tempo

սի բուն փարդ: ես այն փը - շոց

a tempo

43

մե - ջը դար - ձյալ

46

rit.

կը - ն - թո - նեմ սի - թուն վարդ:

rit.

KOMITAS

“Hayrik, Hayrik”



The Song “Hayrik, Hayrik” with Komitas’ Exclusive Accompaniment

The article is about Komitas’s song “Hayrik, Hayrik”, the piano accompaniment of which mainly unfolds in a higher register than the melody of the song itself. The author of the article shares his explanations and arguments about this unique phenomenon.

First, elements of contrasting and undertone polyphony prevail in the accompaniment, which enter into dialogue with the melody of the song.

As for the chords, they are generally not laid out vertically, but by means of arpeggios they are spread in the horizontal direction, they are melodized. Thus, the absence of a bass register does not hinder the perception of the song.

In addition, the article draws a parallel between the accompaniment of the mentioned song and Scriabin’s 5th Piano Sonata, in the upper register of which the sound mass is dematerialized lightening the weight of the sound.

Another consideration. It is said in the song that Khrimyan Hayrik, who bore the pain of the people, was given a thorn instead of a rose, multiplying his suffering. This refers to Jesus’s crown of thorns. And the rose petals decorating Hayrik’s bloodied “holy forehead” symbolize the crown of glory, the halo of orphans. This is how the soaring sounds of Komitas’s accompaniment decorate and “crown” the song.

Daniel Yerazhisht
Professor, Honored Artist of the Republic of Armenia

Ժասմեն Դանիելյան

Դաշնակահար,
կլավեսինահար, երգեհոնահար

Ժասմեն Դանիելյանը 1966թ. ավարտել է Երևանի Չայկովսկու անվան երաժշտական դպրոցի դաշնամուրային բաժինը:

1971թ. ավարտել է Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիան և նշանակվել Կամերային անսամբլի դասախոս:

Որպես կոնցերտմայստեր, դեռ ուսումնառության տարիներից սկսած, շարունակել է աշխատանքը Միքայել Մալունցյանի, Ժան Տեր-Մերկերյանի և այլոց դասարաններում:

1971թ.-ից աշխատել է Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնում՝ որպես կոնցերտմայստեր՝ Օհան Դուրյանի ղեկավարությամբ:

Ելույթներ է ունեցել Լուսինե Զաքարյանի, Մեդեա Աբրահամյանի և այլ անվանի երաժիշտների հետ՝ Հայաստանում, Արցախում, ԽՍՀՄ տարբեր քաղաքներում:

Որպես դաշնակահար, կլավեսինահար, երգեհոնահար՝ աշխատել է Դանիել Երաժշտի հիմնադրած «Շարական», «Տաղարան», «Գանձեր» համույթներում, համերգներով հանդես եկել ԽՍՀՄ տարբեր քաղաքներում, Հոլանդիայում և այլուր:

Չայնագրվել է Հայաստանի Ռադիոյի ֆոնդի համար:

Մասնակցել է «Շարական» լաբերային սկավառակի ձայնագրությանը:



Zhasmen Danielyan

Piano player, harpsichordist, organist

In 1966, Zhasmen Danielyan graduated from the piano department of the Yerevan Tchaikovsky Music School.

In 1971, she graduated from the Komitas State Conservatory and was appointed a lecturer of the Chamber Ensemble.

She continued to work as a concertmaster in the classes of Mikael Maluntsyan, Zhan Ter-Merkeryan and others since the years of her studies.

Since 1971, she worked at the Al. Spendiaryan Opera and Ballet National Academic Theater as a concertmaster under the direction of Ohan Duryan.

She gave performances with Lusine Zakaryan, Medea Abrahamyan and other famous musicians in Armenia, Artsakh, and various cities of the USSR.

As a pianist, harpsichordist, organist, she worked in the ensembles of "Sharakan", "Tagharan", "Gandzer" founded by Daniel Yerazhisht, performed concerts in various cities of the USSR, Holland and elsewhere.

She was recorded for the Armenian Radio Fund.

She took part in the recording of the laser disc "Sharakan".

Արման Նիկոլյան

Հանրապետական և միջազգային մրցույթների
ղափնեկիր, տենոր, օպերային մեներգիչ

Արման Նիկոլյանը սովորել է Երևանի Ջալնի պահպանման
վոկալ- երգչախմբային երաժշտական դպրոցում և Երևանի
Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայում՝ ավարտելով
մագիստրատուրան և ասպիրանտուրան: Սովորել է նաև
Իտալիայի «Երգեցողության ակադեմիայում»:

Արմանը մասնակցել է միջազգային մրցույթների Ռուսաստանում,
Հունաստանում, Մեծ Բրիտանիայում, Ֆրանսիայում, Վրաստանում
և Արաբական Միացյալ Էմիրություններում: Նա արժանացել է
մի շարք մրցանակների հետևյալ մրցույթներում՝ «Ոսկե նավակը»
(Մոզի, Ռուսաստան), և «Իսիկ Կուլի աստղերը» (Դրոգստան),
Մոսկվայի Մեծ թատրոնի Պավել Լիսիցյանի անվան բարիտոնների
միջազգային մրցույթը (2013 թ.), Մոնսերատ Կաբալյեի երգի
միջազգային մրցույթը Իսպանիայի Սարագոսա քաղաքում, ինչպես
նաև Հոմի Օտտավիո Զինոյի միջազգային մրցույթը:

Համերգներով հանդես է գալիս Հայաստանում և արտերկրում:
Ուսանողական տարիներից սկսել է համագործակցել Ալ.
Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային
ակադեմիական թատրոնի հետ: Մասնակցել է մի քանի
նշանավոր համերգների, այդ թվում՝ Զառա Դուլսիանյանի
հորեղանակական համերգի տարեդարձին Պ.Ջալկովսկու
անվան Մոսկվայի պետական կոնսերվատորիայում և Ելենա
Օբրազցովայի հորեղանակական համերգին Սանկտ Պետերբուրգի
ֆիլհարմոնիայում:

2020 թվականից ղեկավարում է Երևանի Ռոմանոս Մելիքյանի
անվան պետական քոլեջի երգեցողության բաժինը և
նաև դասավանդում: Արմանը նաև ստեղծագործում է.
բանաստեղծությունների և երգերի հեղինակ է:



Arman Nikolyan

Laureate of republican and international competitions, tenor, opera soloist

Arman commenced his vocal studies at the Special Vocal-Choir School of Yerevan and went on to study at the Komitas State Conservatory in Yerevan, receiving his Master's degree in 2010. He studied at the Academy of Singing in Italy.

Arman has participated in international competitions in Russia, Greece, Great Britain, France, Georgia and United Arab Emirates. He received several awards in such competitions as the Golden Ship in Sochi, Russia (2002), and the Stars of Issyk Kul in Kirgizstan, the International Pavel Lisitsian Baritone Competition at the Moscow Bolshoi Theatre in 2013, the Montserrat Caballé International Singing Competition in Saragossa, Spain, as well as in the International Ottavio Zino Competition in Rome.

He performs concerts in Armenia and other countries. As a student he began cooperating with the Al. Spendiaryan Opera and Ballet National Academic Theater. He has participated in several notable concerts, including the anniversary of Zara Dolukhanova's concert at the P. Tchaikovsky Moscow State Conservatory and the anniversary concert of Elena Obraztsova at the Saint Petersburg Philharmonic.

Since 2020, Arman Nikolyan has been the head of the Singing department of Yerevan Romanos Melikyan State College and also teaches there. He pursues a creative career as well, is the author of poems and songs.

ՀՏԴ 78
ԳՄԴ 85.31
Դ 171

Դանիել Երաժիշտ
Դ 171

«Հայրիկ, Հայրիկ» երգը և Կոմիտասի բացառիկ նվագակցությունը
/ Դանիել Երաժիշտ.- Եր.: «Նարեկացի» արվեստի միություն,
2023.- 32 էջ:

Սույն ալբոմ-սկավառակը հակիրճ ներկայացնում է Կոմիտասի «Հայրիկ, Հայրիկ» երգի պատմությունը: Այն ծայնագրվել է, հավանաբար, 1912 թ. Փարիզում՝ Արմենակ Շահմուրադյանի մեներգությամբ և Կոմիտասի դաշնամուրային նվագակցությամբ:

Ընդ որում, դաշնամուրի նվագակցության նոտագրությունը մեզ չի հասել: Ալբոմը պարունակում է նշված ծայնագրությունը, դրանից վերծանված նոտագրությունը (նոտագրեց Գոհար Դանիելյանը) և նոր ծայնագրություն, որը կատարել են Արման Նիկողյանը (տենոր) և Ժասմեն Դանիելյանը (դաշնամուր): Ալբոմի նպատակն է նաև կյանքի կոչել «Հարիկ, Հայրիկ» երգի նորանոր կատարումներ, մեկնաբանություններ:

ՀՏԴ 78
ԳՄԴ 85.31

ISMN 979-0-69380-359-0
ISBN 978-9939-9283-6-4

© Դանիել Երաժիշտ, 2023
© © «Նարեկացի» արվեստի միություն, 2023

Daniel Yerazhisht

The Song "Hayrik, Hayrik" with Komitas' Exclusive
Accompaniment

Naregatsi Art Institute, 2023

This CD-album briefly presents the story of Komitas' song "Hayrik, Hayrik". It was recorded probably in 1912, in Paris, with a solo performance by Armenak Shahmuradyan and piano accompaniment by Komitas.

Moreover, the sheet music of the piano accompaniment has not reached us. The album contains the said recording, the sheet music transcribed by Gohar Danielyan from it and a new recording performed by Arman Nikolyan (tenor) and Zhasmen Danielyan (piano). The album is also aimed to give life to new performances and interpretations of the song "Hayrik, Hayrik".

© Daniel Yerazhisht, 2023

© © Naregatsi Art Institute, 2023

«Հայրիկ, Հայրիկ» երգը և Կոմիտասի բացառիկ
նվագակցությունը

Գրաֆիկ դիզայներ՝ Լիլիթ Խաչատրյան
Ձայնագրող և ձայնային համադրող՝ Ռուբեն Օսիպով
Նոտաշար՝ Ռուբեն Խաչատրյան
Սրբագրիչ՝ Մարինե Հարությունյան
Գործադիր պրոդյուսեր՝ Նարեկ Յարութիւնեան
Հատուկ շնորհակալություն Ե. Չարենցի անվան
գրականության և արվեստի թանգարանին

The Song “Hayrik, Hayrik” with Komitas’ Exclusive
Accompaniment

Graphic Designer Lilit Khachatryan

Mixing and mastering by Rouben Osipov

Sheet music layout by Rouben Khachatryan

Proofreading by Marine Harutyunyan

Executive Producer: Nareg Hartounian

Special thanks to the Museum of Literature
and Art after Y. Charents

Սկանավորեք QR կոդը՝ երգերը լսելու համար
Scan the QR code to listen to the songs



Նարեկացի Արվեստի Միություն
www.naregatsi.org



ՀԱՄԱԿԱՐԳԱԿԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐԱԼԻ ՎԵՐԿՈՒՄԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐԱԼԻ ՎԵՐԿՈՒՄԻ

ՀԱՄԱԿԱՐԳԱԿԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐԱԼԻ ՎԵՐԿՈՒՄԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐԱԼԻ ՎԵՐԿՈՒՄԻ



ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐԱԼԻ ՎԵՐԿՈՒՄԻ

www.naregatsi.org